

20. Սարգիս Վ. Կարնեցի:

Կը յիշուի 1680ի վիայագրին մէջ իրրեւ վիայ «Ս. Վ. Արդրուցի»: 1697ին Արրահամ գալիը յԱմրտօլու վանս կ'օրինակէ Գրիգոր Տաթեւացւոյ Մեկնութիւնն Մատթէի եւ Յովհաննու. խնդրողն է «Սարգիս Վ. Կոփեցի ի Կարնոյ եւ այժմ արքեպիսկոպոս նահանգին Վաղարշակերտոյ, բազմեալ ի վանս Ս. Գրիգոր Լուսաւորչի» (Սեւան, 59. Յուլիան Ն. Մառի, էջ 25):

Այս վերջին երկու Սարգիսներն են հաւանօրէն 1676ին յիշուած երկու համանուն սարկաւազները: 1672ին ալ Վարդան խօսք կ'ընէ «Սարգիս փոքր պատանեկի» մասին:

21. Սարգիս Վ. Ամբեցի:

Ծնած է Ամիթ. ծնողք են Վարդան եւ Սուրահի: Իր մասին կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ Վարդան Բաղիշեցի 1653ին. Բաղիշի վանքերէն մէկուն մէջ երեւան կու գայ Միսիթար Գոշի Մեկնութիւնն Երեմիայ Մարգարէութեան, շատ փնտրուած ձեռագիր մը: «Եւ զի էր տառս այս յանհոգութենէ աշխարհասիրաց այրեալ եւ փոտեալ եւ կարկամեալ (յօր. կարկամեար) զիւրանց յիւթն սորա՝ զաւրէն տառապեալ տնանկի, զոր եւ տեսեալ զսորայս փարթամութիւն անկեալ ի գետնի՝ սիրելի եղբայրն մեր Սարգիս, որ ի կարգէ աստիճանաց սրբոյն Ստեփաննոսի, եւ հասեալ ի վերայ կորդեաց զատոս ի ժանդահոտ վայրէն եւ վեր առեալ զսա իրը զմարգարիտ ի տղմէ եւ ուրախամիտ մտօք կարկտեալ զսորայս հնութիւն բազմաշխատ եւ վշտակիր ջանիւ. եւ զկնի աշխատեալ ի խոյզս արինակի եւ հազիւ գտեալ յաջողութեամբ Տեառն. եւ ապա քաջայերեալ զտկարութիւնս մեր առ ի յնկերին ինքեան ի գրել զգալկանս եւ զեղծեալսն. եւ մեր վշտացուցեալ զնա մեր անհամբերութեամբս բազմաղիմի, եւ կարողութեամբ հաստչին Յիսուսի այժմ աւարտեցաք ի փառս նմայ, ի թվականիս Հայոց ՌՃԲ ի քաղաքս Բաղէշ, ի մենաստանս Ամիրզօլու սուրբ Յովհաննու Մկրտչին եւ այլոցն...: Հայցեմ... յիշել յաղօթս զՍարգիս քաջ երաժիշտ եւ զարագագիր գրչապետն եւ նկարողն... որ է սա ի Միջագիտաց ի քաղաքէն Յամթայ եկեալ աստ վասն տքնութեան սուրբ գրոց ընթերցման. որ եւ իսկ ունի զցայգաջան աշխատութիւնն զեզերեալ ի գրուինս իմաստից միշտ...»: Կը խնդրէ յիշել «եւ զիս զսակաւ տաժանողս Վարդան»: Կը կցուի՝ աւելի նուրբ գրչով՝ «Կազմեցաւ»

սուրբ գիրքս ձեռամբ Վարդան անարժան սարկի. յիշեցէք զվայելող սորա զՍարգիս եւ զԾնողսն՝ զՍուրահին եւ զՎարդան հայրն եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն» (Զմմառ, Թ. 349 ըստ Բէշիշեանի Յուլիանի):

1684էն յառաջ Մարգուանցի Գրիգոր գալիը կ'աշակերտի Սարգիս վարդապետին եւ կ'ուսանի ընթերցողութիւն եւ ծաղկարարութիւն. հաւանօրէն Սղերդի Ս. Կոնոնոսի վանքին մէջ, որուն վանահայր կարգուած էր Սարգիս: 1684ին վարդապետ եւ աշակերտ Կոստանդնուպոլիս կ'երթան, այն տեղ կը պարապի Սարգիս քարոզութեամբ: Ժամանակ մը վերջը կը վերադառնայ իր վանքը. այս նկատմամբ գրած է Գրիգոր Մարգուանցի իր ապագրած Յայտաւուրքի յիշատակարանին մէջ. «Եւ նուստ ամենեցունց Մարսըւանցի Գրիգոր գալիըս, որ եմ ձեռնասուն աշակերտ Տիգրանակերտցի Ծաղիկ Երաժիշտ Սարգիս գիտնական վարդապետին, որ ի յԱմրտօլ Դասատունն է վարժեալ, հմուտ աստուածային գրոց: Եւ ես նուստ աշակերտ գորով նմին ըստ իմում կարողութեամբս (sic) ուսայ ի նմանէ զընթերցողութիւն եւ զծաղկարարութիւն: Եւ զկնի ժամանակաց եկեալ ի Կոստանդնուպոլիս հանդերձ վարդապետիս, որ էր թուական Հայոց ՌՃԼԳ (1684): Եւ ինքն յետ բազում քարոզութեան՝ ել գնաց ի վանքն իւր սրբոյն Կոնոնոսի»:

Անդրապոյն տեղեկութիւններ կու տայ իր մասին Յովհաննէս Կոլոտ.

«Ի սոյն ամի (1706) Սարգիս վարդապետն, որ էր ի մեր Դասատանէս, այր խոհեմ յոյժ եւ քաղցրաքարող, նորոգեաց սրբատաշ քարամբք կրամածիւք՝ զՆորդուտի լուսաւորչաշէն վանաց սաղերն, հանդերձ այլովք շինուածովք: Եւ անընդունակ լեալ ի համանմանաց վերողբեցելոց, զբովանդակ շինածոյն ծախսն ինքն հողաց: Եւ զարձաւ յառաջին վանսն մեր, եւ անդ փոխեցաւ առ բաղձալին իւր. որոյ հողոյն Տէր ողորմեսցի եւ զասեցէ ընդ սուրբս իւր» (Կիւլխէրեան, Կոլոտ, էջ 156):

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

ՈՐՑՈՒԹԻ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն):

Դ.

ՀԱԹԵՐԻ ՎԱՆՔԵՐԸ

Հաթերք կամ Ըստակ (Ըստիսական) քաւառը կը տարածուի Թարթաւ, Եանչաղի ձախ եւ Թըղու աջ ափերուն միջեւ:

1. ԴԱԴԻ ԿԱՄ ԽՈԹԱՅ (ԳՈԹԱՅ) ԿԱՄ ԽՈՒԹԱՅ ՎԱՆՔԸ

Թարթաւ գետի ձախ կողմը բլրակներու եւ Լաչին-Ղայեայի ժայռապարիսպներու մէջ շինուած է Դադի վանքը եւ «կարելի է ասել ընական մի մեծ փոսի մէջ, միանգամայն զուրկ հորիզոնից... գետից մինչեւ վանական շինութիւնները մօտ կէս կիլոմետր է: Վանական բոլոր շէնքերը չըջափակուած են հասարակ պարիսպներով, բայց ոչ իրրեւ բերել պարիսպներ...: Վանքին կարելի է մօտենալ հիւսիսի բարձրութիւններից կամ արեւելքի բլուրներից» (Տէր-Մովսէսեան Մեսրոպ արքեպ., Հայկական երեք մեծ վանքերի Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ 1938, էջ 85¹):

Դադի վանքը զանազան շինութիւններէ բաղկացած է:

Հնագոյն տաճարը կամ Բաղիլիկը (Տաւաղ, էջ 85) կը գտնուի հիւսիսային գաւիթվայրի թեքութեան վրայ եւ անոր հիւսիսային ու արեւելեան պատերն ամբողջապէս արտաքուստ հողի մէջ ծածկուած են: Ծինուած է անտաշ քարերով եւ կամարածածկ է: Թէեւ այժմ զմբէթ չունի, սակայն այնպէս կը թուի թէ ժամանակին զմբէթով օժտուած եւ կամ եթէ զմբէթէ զուրկ էր՝ ամէն պարագայի վերնամուտով անոր էր լուսաւորութեան հող տարուած էր: «Բաւալուսաւորութեան հող տարուած էր: «Բաւական երկար ձգուած շինութիւնը միջուկ սիւներ չունի եւ տանիքի կամարները յենում են պատերին միացած երկու կողմից երեքական կիսասիւնների վերայ: Իրրեւ բաղիլիկային յատակագիծ ունի միանաւ կերպարանք, իրենից ներկայացնելով մի երկար քառանկիւնի յատակագիծ, առանց որ եւ է բաժանումի» (անդ, էջ 85):

¹ Այս գիրքը ստեղծելու յիշատակուի «Տաւաղ» համաստեղութեամբ:

Հիւսիսային պատին մէջ կան չորս, իսկ հարաւայինի մէջ՝ երկու որմնադարաններ, որոնց օրինակը եկեղեցու մէջ սովորական է եւ ոչ էլ նպատակը հասկանալի» (Տաւաղ, էջ 85): Ունի երկու գուռ մին՝ արեւմտեան պատի մէջ տեղը եւ մէկայլը՝ հարաւային եւ արեւմտեան պատերու անկիւնը: Դարձեալ ունի՝ սեղանի ապսիս, կողքերին փոքր խցիկներ» (անդ, էջ 85):

Ինչպէս աւերակներէն կարելի է հաւատաւոր հաստատել՝ այս եկեղեցին հին շինութիւն է եւ ստեղծ նորոգութիւններ տեսած, սակայն է կրցած տոկալ ժամանակի հարուածներուն:

Առաջին եկեղեցոյն կից է երկրորդ բաղիլիկան՝ եկեղեցին, որ անկէ աւելի նեղ է եւ կարճ: Ծինուած է անտաշ քարերով «եւ հիւսիս-հարաւ ձգուած՝ միջնորով բաժանուած է երկու հաւասարի, արեւմտեան մասը հաւանական է յատկացրած էր ժամատան» (անդ, էջ 86):

Այս գոյգ եկեղեցիներու շարունակութեանը — արեւելեան անկիւնը — կանգնուած է Արցու խաթունի եկեղեցի-կաթուղիկէն: «Ամենահայակապ եւ գեղեցիկ շինութիւնն է սա, սրբատա քարերով, ԺԳ. դարու հայկական ոճի ընդհանրացած ոճով կառուցուած: Յատակագիծը խաչաձեւ զմբէթաւոր եկեղեցիներին է, համարեա հաւասար քառանկիւնի թեւերով, ներսում չորս ապսիսներ, որոնց անկիւններում գոյացած որմերը հոյակապ զմբէթի յենարաններն են: Պատերը գրեթէ ցցուածքներ չունին (Տաւաղ, էջ 86. հմմտ. Ազգր. Հանդ. 1913, իի., էջ 82):

Աւաղ սեղանին կից, եկեղեցոյ ներքը, կան ութ փոքր սեղան եւ այն՝ չորս անկիւններու եռայարկ սենեակներու կամ խորաններու մէջ: Այդ սենեակներու երկրորդ յարկը կ'առաջնորդեն պատերէն գուրս ցցուած աստիճանները, որոնց մէկ մասը տաշուած եւ կտրտուած է:

Եկեղեցին ներսէն ու դրսէն միատեսակ տաշուած քարերով կառուցուած է: Պատերը զարդարուած են նկարներով, որոնցմէ մաս մը եղծուած եւ մաս մըն ալ դեռ մնացած է, բայց ոչ՝ բոլորովին անաղարտ:

Այս եկեղեցոյն եւ երկրորդ բաղիլիկային յենուած է սրահը, որ ունի հինգ հաստ որմնաշար սիւն, որոնք աղեղնաձեւ միացած՝

իրենց վրայ կը կրեն կամարածածկ տանիքը: Ասիկա՝ շինութեան ձեւովն ու տեղովը՝ Տաթևի համանուն շինութիւն է:

Ասոնցմէ զատ Դաղի վանքն ունեցած է զանգակատուն, ժամատուն, քանի մը մատուռ, երկու «տաճար» (բնակավայր), զինատուն եւ անշուշտ հիւրանոց, գործատուն եւ մատենադարան (Տաճար, էջ 89—91. Ազգ. Հանդ. 1913, Բ., էջ 75—84. Նոր Դար, 1892, Թ. 15):

Այս եկեղեցիներն ու շէնքերը՝ միանուազ չեն շինուած, այլ դարերու ընթացքին եւ իրենց ճարտարապետութեան օրինակներ ունեցած կ'երեւան արդէն դոյութիւն ունեցող ուրիշ շինութիւններ — նուազ փոփոխութեամբ:

Դատի վանքէն դեռ անեղծ պահուած եւ մեզի հասած են քանի մը կարեւոր արձանագրութիւններ, որոնք եթէ ոչ լրիւ, գոնէ բաւական ցայտուն, անոր պատմութիւնը մեզի կը ներկայացնեն:

«Շնորհիւն ամենակալին Աստուծոյ Հաւր եւ միածնի Որդոյ նորա Յիսուսի Քրիստոսի եւ պարզեաւքն ամենասուրբ Հոգո (եւ) Արդուխաթուն նուաստ աղախին Քրիստոսի դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա թագաւորացն տեառն Հաթերքո եւ ամենայն երկրին Սաշենո յուսով մեծաւ շին(եցի) գուրբ կաթողիկէ ի տեղով հանգստարանի առն իմն եւ զուակաց իմոց Հասանա անդրան(կին) իմն եւ Գրիգորի եւ ի Տէրն կիսաւրեա վախճանեց(աւ), զի վասն իմ մեղաց պատժեաց զիս Աստուած եւ երարձ ի զլիտ իմն գերկոսեան պսակն վայելուէ, զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս եւ զկնի երից ամսոց եւ կրտսեր որդին իմ Գրիգորի Տէրն կոչեցեալ պարտ բնութեան հատուցանելով վճարեաց ի կենցաղս եւ փոխեցաւ ի Քրիստոս սուգ անխիթար... թշուառացելո մաւրս իւրեանց, այլ զի ի կենդանութեան յոյս ի մտի եղ... շինել եկեղեցի յայսմ տեղով եւ ոչ ժամանեցին վասն արագահաս լինելո (ի վերայ նոցա մահուն) ինձ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սրտից նոցա եւ իմն եւ դստերաց հայցեմ, որք երկրպագէք սրբո խորանիս յի-

շել յաղաւթս զվերագրեալսն ի սմա: Կատարեցաւ սուրբ քաւարանս ի թուականութեանս Հայոց Ոկո (1214) ի փառս Աստուծոյ եւ ի նորոգութիւն սուրբ ուխտիս եւ սահմանեցաք ժառանգութիւն եկեղեցոյս զեւզս եւ ազարակս իւրեանց սահմանաւքն զԱպահէն, եւ զԳեղնադարածանց եւ զԲճանց եւ զԿանանչաւորն, որ ի Վայոճոր եւ երկու տուն յԱրփա եւ հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զուազ խորանի պատարագ յանուն վերագրելոյս կատարել անխախտն ոք այսմ վճուի հաստատն խախտումն առնէ յիշխանաց կամ յառաջորդաց տեղոյս կամ ո ոք եւ իցէ խախտանցի լոյս նորա առ Քրիստոս եւ զաստպարտեցի յԱստուծոյ» (Տաճար, էջ 88. Արցախ, էջ 204 եւն եւն):

«Կաման Աստուծոյ եւ Մնպատ որդի Վախտանկա շինեցի զգաւիթս եկեղեցոյս եւ ետու զՇինաճոր իւր սահմանովն եւ զԳոփուն տարին յեկեղեցիս» (Տաճար, էջ 88):

«Էին զօրութեամբ եւ Աթանաս որդի Հասանոյ կանգնեցի գուրբ նշանս յիշատակ հոգո իմն, զտէր Աթանաս յիշխալիք ի Քրիստոս թիվն ՉԼԲ» (անդ, էջ 89):

«Տէր Գրիգորիս սնուցանող սուրբ Աթանասի յիշ.» (անդ, էջ 89):

«Կաման Աստուծոյ եւ Հասան որդի Վախտանկայ, տէր Հաթերքու եւ Հանդարերգու, Սաշենարերգու եւ Հաւքաղացին կայի աւագութեանս ամս Խ. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց սուգնականութեամբն Աստուծոյ եւ եղեն ինձ Չ. որդի զրեղերս եւ զգաւառս ետու նոցա եւ ես ի վանս մօր իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս եւ եղէ կրօնաւոր եւ բերի զխաչքարս ի յԱղուայ շատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք կանգնեցի սուրբ նշան հոգւոյ իմոյ... ՈԼԱ. (1182) թուիս (Արցախ, էջ 204. Տաճար, էջ 97):

«Ես Մամա թագուհի ամուսին Հասանայ դուստր Կուրիկայ թագաւորին կացաք աւագութեան ամս Լ. (Խ.) ես եւ այր իմ թողեալ զհայրենիքս որդւոց մերոց եկաք ի վանքս մօտ տէր Գրիգորիս եւ որդի մեր հոմանուն նորին եւ զգեցաք զձեւ միանձանց եւ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ...» (Տաճար, էջ 90. Արցախ, էջ 204):

«Աւանականութեամբն Աստուծոյ եւ Մամբան (Մամա) ամուսին արիականին Հասանայ եւ որդի մեր Գրիգոր տեաք գորով տեղոյս հայրենեաւք որ եւ մեր պարոնէքն հաս-

2 Խօսքս վանքի մէջ կայ հրաշալի Սաշքար մը, որուն համար Ֆրանսացի ճամբորդ մը խոշոր գումար մը կ'առաջարկէ զայն Ֆրանսա փոխադրելու ցանկութեամբ (Բիւզանդիոն, 1901, Թ. 1492):

տատեցին ի ՉԺՉ թիվին տվաք ի սուրբ ուխտս զԾովատեղ, Ջաջուանց, զՋուլիկանց: Ես Գրիգոր տվի զՋազուանց հողերն զմեր բաժին իւր ձորեցովն որդիք իմ տէր Սարգիսն եւ միարանք սահմանեցին սուրբ Ստեփաննոսի տաւնի ժամն, որ լինի իմ մաւրն եւ ամուսնոյ իմոյ Ասիին... Մոխրարաքս մեր բաժին եւս տվաք սուրբ ուխտս ՉԿԱ»:

«Շնորհիւն Աստուծոյ եւ Աշոտ որդի Ամիր Հասանոյ... ամ իշխանէն Պաււա եւ մայրն իմ Աճիրնի միարանեցաք սուրբ ուխտիս եւ տվաք... հողն ի Սաշենաղեալի զԼ... սուրբ կաթողիկէս տէր Աթանաս... տվին ինձ պատարագ զամեն եկեղեցիս թվ. ՉԻ»:

«Կաման Աստուծոյ եւ Մմպատ իշխան որդի մեծին Լիպարտի միարանեցայ սուրբ ուխտիս Դիգու վանաց առաջնորդութեամբ տէր Աթանասս զԽնդաշանց այդին եւ յեղեղիս իմ զնամ Չիթահանքն եւ այլ արդիւնք ըստ կարի եւ զԿանանչաւոր ընդ Եղնայն (°) որ հաստատեցի ամեն խարճովն անշատ եւ ետու ի սուրբ կաթողիկէս: Տէր Աթանաս եւ այլ միարանքս սահմանեցին մեզ Ջատկին յաւրութեան կիրակին աւրն զամեն եկեղեցիքս մեզ ժամ... թուին ՉԺԴ» (Տաճար, էջ 96):

«Կաման Աստուծոյ եւ Վախտանգ որդի Մմպատա ծառայի եւ ամուսին իմ Նանա աղախին Քրիստոսի միարանեցաք Դատէվանաց եւ տուաք ի հայրենեաց մերոց զՇեչաչորենցն եւ այդի մի ի Սողեհիկս եւ մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով եւ բնակիչքս տէր Գրիգորիս եւ միարանք սահմանեցին մեզ Բ. ժամ զամենայն եկեղեցիքս զտաւն Յովաննուն, Անաին եւ զտաւն Վարդանանց Վաղնուսն ՈՂ էր» (Տաճար, էջ 94), Շահխատանդա ՈՂ էր» (Տաճար, էջ 597, ուր թուականն է ՈԼԱ):

«Կաման Աստուծոյ եւ Գոնցէս եւ որդիքս Հասան եւ Վահրամ թոռն Դափանաց տվաք ի Դաղէվանս զմեր հայրենիքն զԽուզիկս սահմանովն խաւովն» (Ջալալիանց, ձածր., Բ., էջ 226):

«Արդ այս է մահին թիւ(վ)ն ՌձԺՁ էր, եւ անարժան Սոլիս գրեցի»:

«Կաման Աստուծոյ եւ Գրիգոր տնտես հրամանաւ Տեառն Աթանասի եւ կամակցութեամբ այլ եղբարցս զնեցի իմ ընչիւք զԱխտակալն եւ եղու յեկեղեցիս եւ խառնեցա ընդ եղբայրութիւն սոցա եւ սահմանեցին ինձ ի տաւնի Երեւման սուրբ խաչին գ. աւր պատարագ»:

«Աստուած ողորմի տէր եղիէին հողոյն»:
«Կաման Աստուծոյ եւ Մամա ձեւաւոր միարանեցա սուրբ ուխտիս առաջնորդութեամբ տէր Աթանասի ետու զՍարուտանց հողն, գ. եզն եւ այլ արդիւնք ի սուրբ կաթողիկէս եւ սահմանեցին ինձ Բ. աւր ժամ ի տաւնի Սահակայ... ՉԺ»:

«Կաման Աստուծոյ եւ Սերբո Ջովշոկեցի միարանեցա սուրբ խաչի հաւրայքն մի աւր պատարագ սահմանեցին ի տարին»:
«Աստուած ողորմի Կիրակոսի ամուսնուն, թվ. ՉԻԼ»:

«Քրիստոս Աստուած ողորմի Սարկաւազ, որ ետ ընծա եկեղեցոյս տէր Սգս եւ միարանքս ետու Բ. պատարագ ի տարում ի տաւնի սուրբ Թէոդորոսի...»:

«Ես Մամա դուստր Վաղտանկա տեառն Հաթերքայ ետու զիմ հայրենի պաշտամակ եւ սպասք եկեղեցոյս յոսկո եւ յարձաթո ի սուրբ կաթողիկէս յառաջնորդութիւն Տեառն Գրիգորիսի եւ սուրբ եղբարքս սահմանեցին զտաւն սուրբ Յակոբայ եւ զկիրակէն զամէն եկեղեցիքս անխախտն ՈՂ»:

«Ձուստա Վարդնի որդի Գրիգոր կազմող սուրբ նշանիս յիշել աղաչեմ ի Քրիստոս»:

«Նկրող սուրբ նշանացս զՊօղոս յիշեցէք»:

«... իմ եղբարքն ետուն ինձ եւ ես կամաք տուի սուրբ կաթողիկէս ա. չորեցա հողի շինականարան ա. Չաղաց ա... անագսիտի շուրջառ պատուական յառաջնորդութեան տէր Գրիգորիսի որդւո Վասակա եւ սոքա ետուն ինձ գ. աւր զամենայն եկեղեցիքս»:

«Աստուած ողորմի Սարգսի»:

«Անուամր Աստուծոյ եւ Գրիգոր որդի Հասանա, որ մեծ յուսով տուի ի Դաղի գերեզմանս գ. տուն շինակ վասն հոգո իմն յառաջնորդութեան Տեառն Գրիգորիսի եւ սոքա տուին ինձ զտաւն սրբոյն Գրիգորի... ՈՂԳ»:

«Ես Հասան որդի Գրիգորի... դեան իւր սահմանովն»:

«Ես Սեւաղ իշխան որդի Մմպատա եւ ամուսին իմ Թաճերն տուաք ի հայրենեաց մերոց ի Դաղի վանս զԿամրջատափ ա. այդենի Սողեհեկուց ի նշխարատունն մեծ յուսով Տեառն Գրիգորիսի, միարանքս ետու մեզ Բ. ժամ զամեն եկեղեցիքս զտաւն Տեառնընդառաջին ինձ զԱւագ Հինգչարաթ աւրն Թաճերին... թիւն ՈՂ»:

«Կամաւն Աստուծոյ եւ տէր Ներսէս եպիսկոպոս Չարարերոյ միաբանեցայ Դատի վանացն, մին այգիին հիւրատանն, տէր Գրիգորիս եւ միաբանք սահմանեցին ինձ ի տաւնի Տեառն Բարսղի Բ. աւր պատարագ... ԶԲ»:

«Սոնդքար փաշէս դուստր պարոն Աղբուղին ետու կազմել սուրբ նշաններ»:

«ԹՎ. ՌԾԴ (1605) Թուղոն երբ»:

«Ես Յովանէս երէց Կոտուցի իմ հալալ արդեամբք միաբանեցա սուրբ ուխտիս եւ սահմանեցին ինձ ի Յայտնութեան ճրագալուցին ա. պատարագ... ԶԻ» (1271):

«ԹՎ. ՈՂԴ (1224) եւ տէր Գրիգորիս առաջնորդ սուրբ ուխտիս որդի նահատակին Վասակայ շինեցի զժամատունս յիշատակ հոգւոյ իմոյ, յաղաւ...»:

«Այս է հանդիստ Մամբանին ամուսնո զստեր Բրդին եւ Սաւրիշահի մաւր Գրիգորո աղաչեմ յիշել ար. թՎ. Զ» (1251):

«Ս. Աստուածածին Բրիտոս Աստուած... եւ Մամբան դուստր Բրդին եւ Սորիշահի, ամուսին Հասանայ կանգնեցի զխաչ»:

«... Երանեալն եւ Դագէի եւ Սաղաի աթոռակալն տէր Յոհաննէս եղբայր քաջ զօրականին Հասանա արքայաշնորհ իշխանին հաւրն զինգորին Գրիգորո աղաչեմ յիշէք ի բար. թՎ. ԶԾԴ» (1305):

«Ես Գրիգորիս որդի նահատակին Վասակայ առաջնորդ ուխտիս Դագուի վանաց կանգնեցի զխաչս Մահանին, ընթեռնոյք յաղաթս յիշեցէք»:

«Թիւ ՈՂ (1181) եւ Սարգիս որդի Աշոտա կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո հանկսեան իմո...»:

«Թ. ՈՂԱ (1182) յիշեցէք. եւ Հասան կանգնեցի զխաչ եղբաւր իմո Վարհամա յաղաթ»:

«Թ. ՈՂԹ (1290) եւ Գրիգորէս որ(դի) Վախտանգա կանգնեցի զխաչս մաւր իմո Շուշկանա, որք երկրպագէք յաղաթս յիշ...» (Տահադ, էջ 84—91, 94—97. Ջալալեան, ձամբ., Բ., էջ 198—205, 220—228. Արցախ, էջ 203—209. Ազգր. Հանդ., ԻԵ., էջ 80 եւն. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 356—364. Նոր Դար, 1893, Թ. 17):

Չանդակատան վրայ, զոր Դօփեանց Վահրամ իշխանին որդին Սարգիս եպիսկոպոսը շինած է, կայ հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը՝ «Կամաւն ամենակալին Աստուծոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Բրիտոսի այս մեր գիր է իշխանական հրամանի: Ես

Տուրսունս, Սէյտիս, Պուաչս, Գրիգորս, Հասանս, եւ եղբարքս եւ որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տէր Աւագ եպիսկոպոսի եւ իւր եղբայր Մանուէլ արեղային, որ մեր հայրենի աթոռն զԴատի վանս, զՍաթրի վանս, զԳեառամէջն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապունցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի ի վանորայքս մարդ չկար, որ յառաջն կար եւ չէն պահէր եւ եկեղեցիքս լուսաւորէր, յայս պատճառէս երես դրաք եւ զայս սուրբ աթոռին ի նոքա ապարեցաք եւ զերկու իշխանութիւնն էլ հէնց ի նոսա յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթողիկոսն մեծ տէր Չաքարիային, տէր Աթանասին եւ տէր Սարգսին էր տուեալ զԴատի վանս, զՍաթրի վանս, զՀաղբատ իւր վեճական, նոյնպէս եւ այս տէր Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց փրճակաւ եւ չըջարեական թղթիւ»:

«Կամաւն ամենակալին Աստուծոյ եւ Սէյտիս, որդի պարոն Շանչին, թոռն պարոն Հասանայ, եւ Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս, որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ, եւ Այտինս որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին, եւ Շահանչս որդի Հասանայ թոռն պարոն Ճահանչին, մեք չորս եղբարք տուաք մեր վանորէիցս զԱւագսէն, զՍուրբ, զՍոգեմակիս իւր չորս սահմանովն, ի Չափարին հանտէն Չապունանց ագարակ տեղովն, Բոնչի աղբուրովն, Թաղանանց գետովն Պետրոսարակ, որ մեր պապերն տուեալ են, զՍոխանանց, զԾովատեղն, Չալոռանց, Չաւրէկանց, զՅրտնտան, զՇիւրմանանց, զԳրիգորաթաղս, զԴատի վանս իւր քաւակերտովն, զՀերանանց, զՀակոտակարերգովն, Նաւի աղբուրովն, Բերդաբարովն, Կոպաչատունցովն, Ողնովն, Խուզեմակոց մեծ այգին, Մանանածովն, Շաղիկանց, Եգնարածանց, տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճոճաւոր էր, քանի որ իւր պէտքն է վարէ, տասանորդն առնու եւ տայ վանքին անարտճառ: Այս եղեմեր ուխտ առաջի Աստուծոյ եւ սուրբ Դատի առաքելոյս...» (Արցախ էջ 209):

Յառաջ բերուած արձանագրութիւններէն շատ պայծառ կը տեսնուի, որ Դատի վանքը խաչենի իշխաններու եւ իշխանուհիներու ստեղծագործութիւնն է եւ անոնց հոգածութեան ստարկան: Այս՝ անոնց ձեռներէցութեամբը հիմնուած պահպանուած եւ նորոգուած: Անոնց առատաձեռնութեամբը գիւ-

ղերով եւ ուրիշ կարուածներով հարստացած: Անոնք իրենց կենդանութեան ատեն զայն պատուած են իրենց այցելութեամբն ու ներկայութեամբ: Մինչեւ անգամ Հասան եւ իր կողակիցը Մամա աշխարհէ կը հրաժարին եւ անոր մէջ կ'անցնեն դուցէ իրենց ամէնէն հանդարտ օրերը — հաւանարար իրենց համար շինուած յատուկ կացարանի մէջ (Տահադ, էջ 90)³:

Դագի վանքի մանրամասն նկարագրութիւնը եւ արձանագրութիւնները տեսնել՝ Տահադ, էջ 83—106 եւ Ազգր. Հանդ. 1913, ԻԵ., էջ 80—84:

Նկատի ունենալով Դագի վանքի դերը եւ անոր եկեղեցիներէն ոմանց հնութիւնն ու ոճը՝ կարելի է ըսել՝ թէ հոն արդէն կանխաւ համանուն վանք մը կար եւ ապա Սաչէնի իշխաններու հաճութեամբն ու առատաձեռնութեամբը նոր եկեղեցի մը շինուեցաւ եւ ուրիշ շէնքեր կառուցուեցան: Այդպէսով վանքը իր իսկական արժէքն առաւ: Համակարծիք ենք Մագիստրոսի թէ Արգու խաթունը — վանքի մեծ բարերարն — անոր եկեղեցւոյն շինուած թեան ատեն իրեն խորհրդական ունեցած ըլլայ Յովհաննէս եպիսկոպոսը, որ Հաղբատի առաջնորդն էր: Նաեւ կրնայ ըլլալ որ անոր առաջարկով կամ ի յարգանս Հաղբատի Ս. Նշանին՝ Արգու խաթունն իր նորակերտ «Դագի վանքի կաթողիկէին սուրբ Սաչ կամ սուրբ Նշան անուն տուել» է (Տահադ, էջ 88):

Չեռնարկու եւ առատաձեռն եղած են Արգու խաթուն⁴, Հասան, Մամա, Գրիգոր, Սմբատ եւ ուրիշները (Արցախ, էջ 207) եւ անոնց վստահութիւնը վայլած ու լաւ գործունէութիւն ունեցած են Դագի առաջնորդները, մանաւանդ Աթանաս, Սարգիս, Գրիգորիս⁵ եւ Գրիգոր⁶:

Անոնք սիրեցին այդ վանքը, անոր սպասուելի իրենց ուժերը եւ շատերը բախտ ունեցան անոր կամարներուն տակ հանգչելու:

Դատի վանքը եպիսկոպոսանիստ էր եւ դամբանարանը վախթանիկան ցեղին (Արցախ, էջ 205—206):

³ Չալի մեռած Շղե թոռն «այրեաց եւ զոսաբելալիք ուխտ սրբութեանն, որ կոչի Դագուի վանք» (Հայագրատում, Բ., էջ 345):

⁴ Կիր. Գանձակեցիին անոր մասին կը գրէ՝ «Եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ճածկոյթ այլ եւ այլոց... եւ Դատի վանիցն» (Պատմ., էջ 11):

⁵ Գրիգորիս կը ջանայ Դատի Մարտիրոսի խոսքով ինքնը բառնալ (անդ, էջ 184):

⁶ Գրիգոր 1558ին զանազան շինութիւններ եւ նորոգութիւններ կ'ընէ (Արցախ, էջ 209):

Սոյն վանքի մասին որքան շատ են քարի վրայ եղած յիշատակութիւնները, այնքան կարծես սակաւ են թղթի վրայ եղած տեղեկութիւնները: «Պետրոս բարունակաւոր նկատմամբ, որ ժի. դարուն Դագի առաջնորդ եղած է կան քանի մը յիշատակագրութիւններ (հմմտ. Արարատ, 1888, էջ 484—485. Ալիշան, Սիւսիան, էջ 35 [37], շ. Ն. Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. շ. Պոտուրեանէն, 1684):

Յառաջ բերենք հետեւեալ յիշատակարանը. «Արդ ի ժամանակի յորում գնեցաք զկենսաբուխ սուրբ Աւետարանս, էին կաթողիկոսք ի տանս Աղուանից երջանկափառ հայրապետք գտէր Երեմիայն եւ գտէր Սիմէօնն, զսուրբ աթոռոյն Գանձասարայ եւ գմբերումս նահանգի առաջնորդութեան գԴագի վանից եւ զՍաղի վանից արհի եւ պանծալի բարունակաւորն վանից Պետրոսն եւ գտէր Յոհաննէս, գտէր գտէր Պետրոսն եւ գտէր Գրիգորն եւ գտէր Աթաբարեղն եւ գտէր Դաղարն եւ գտէր Ստեփաննան... Գրեցաւ (աւետարանս) ՌՃԽԳ (1694) թուին Յունիսն ժի. յամսեան ի ժամանակի յորում նորոգէաք զսուրբ աթոռս Սառի...» (Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ., էջ 998—1000⁷):

Սուքի նիւթ եղող այս վանքը կոչուած է Ս. Թագէտի վանք՝ յանուն Ս. Թագէտո Առաքեալին: Անուանուած է սովորաբար Դագի վանք անոր Դագ աշակերտին անուամբ: Յորջորճուած է Գոթայ կամ Սօթայ (Սոտա) վանք, վասն զի Սօթ կամ Գօթ գիւղի վանքն է (Ալիշան, Արշալոյս Գրիտունէութեան ի Հայս, էջ 23. Հայագրատում, Ա., էջ 93. Արցախ, էջ 203. Աղուանից Պատմութիւն, Ա., էջ 56 եւ 193. Արարատ, 1896, էջ 42 եւ Նոր Դար, 1893, Թ. 17, ուր կ'ըսուի՝ «սա շինուած է Սաթայի խա-

⁷ 1411ին... յեպիսկոպոսութեան նահանգիս սուրբ աթոռոյն Ազգէի (Դագի վանից) տէր Չաքարիայի՝ Նոյնի Գեառամէջ վանքի մէջ ճաշոց մը կը գրուի (Նոյնի տարբ., էջ 39—40): 1684ին Մարի մէջ ընդ հովանեատարք, էջ 39—40): 1684ին Մարի մէջ ընդ հովանեատարք մը Դագի Ս. Առաքելոյն... Վաստատա Գարողիք մը կը գրէ, իսկ Բարսեղ քահանային (նոյն տարւոյն մէջ) կը սուրբ եւ ի գերահռչակ Դագի վանք» (Ազգր. Հանդ., ԻԵ., էջ 168): Հասկանալու է Արատի Ս. Թագէի վանքը: — 1626ին Վարդան քահանան կու գայ «ի սուրբ յուխտս Դատի վանաց» (Թօփեան, Յուց. հայ. Չեռ. Դագեան Վ. Ի., Բ., էջ 32) եւ 1652ին կը յիշուի Ստեփանոս արքեպիսկոպոս, որ է՝ «պատար Այրաթան հովի ի սուրբ Դատի վանիցն եւ Մարգարայնայ սուրբ Նշանին» (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. էջ 1626):

նուսի ձեռքով. եւ հետեւաբար կոչուած Սաթայի կամ Սոթայի վանք»⁸:

«Սոթայի վանքը այժմ բոլորովին ամայի է, ինչպէս Չարեքայ վանքը... եւ ծառայում է աւագակներէ կացարան»:

«Բարձրագոյն արձանագրութիւններէն շատերը կոտորատուել, անհետ կորել են, բայց դարձեալ այնքան են մնացածները, որ որոշ չափով նպաստում են վանքի մոռցած պատմութիւնը վերականգնելու: Դոքա արտագրուած եւ տպագրուած են Սարգիս եպ. Չարախանի եւ Մակար եպ. Բարխուդարեանի ձեռքով, թերի եւ սխալ...» (Ազգ. Հանդ. 1913, էջ 84):

«Էջմիածնի վանքը պատերազմից առաջ ունէր Ղարաբաղում իր խոշորագոյն կալուածը Սոթայի վանք կամ Չարեքայի վանք անունով որի տարածութիւնն էր 46.000 գեւորատն» (Տահադ, էջ 83): «Ամբողջ կալուածքն կոչվում էր Սոթայի վանք կամ Չարեքայի վանք» (անդ, էջ 84):

2. ԵՊՄԱՎԱՆԻ տես ԴԱԳԻՒՅԻ ՎԱՆՔ

3. ԶԱՐԵՔԱՅԻ ԿԱՐ ԲԱՐԽԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Գաղի վանքէն բաւական հեռու, Թարթուսի ձորափին, բլրակի մը վրայ: «Բարձրագոյն է չորս մատուռներից, միմիանց կայած... հասարակ շէնքեր են եւ շինարարական առանձին հետաքրքրութիւն չեն ներկայացնում» (Տահադ, էջ 98 եւ Արարատ, 1896, էջ 42): Չարեքայի⁹ եկեղեցւոյ մուտքին կանգնուած խաչին վրայ գրուած է «... էր թւին եւ Սեւադա... իմ Շահանդուխտ կանգնեց... խաչս ի տապանի Գրիգորա իշ... նո որդոյն հզար եւ յաղթող իշխ... որ բազում քաջութեամբ եհար զտա... եւ չիողին վանց դիտ անբեր... սամէր եւ մեծ պատերազմ որ անկ... ՌՉԿ (?) տաճիկ եւ անդ նահ...»:

⁸ Արցախի Հաթերք գաւառի Թարթուս գետի աջ կողմը կրտսիկ Սոթա վանքը: Այս վանքի սկզբնական շինութեան թվականը հայտնի չէ, հաճախ նորոգվել է և վերաշինվել է, որով կորել են արձանագրութիւնները եւ թիւ կային: Առաջին անգամ արձանագրութեան երեւում է 12րդ դարուն: Այսպէս հաջորդաբար հետագային կարելի է այս վանքում գտնել նորոգութեան կամ վերաշինութեան արձանագրութիւններ» (Թորամանեան Թ., Նիւթեր հայկ. ճարտարապետութեան պատմութեան, Երեւան 1948, էջ 131):

⁹ Կոչուած է նաեւ Սոթայ վանք, սակայն լոկալ անունը մերձ ըլլալուն պատճառով (Արձագանք, 1886, էջ 577): — Ղարապաղի մէջ Էջմիածնի պատկան ընդարձակ կալուածը (46.000 գեւորատն) իր մէջը գրտնուած վանքերու անուններովը սակայ անուանում է եւ չիսթութեան առիթ տուած:

Անոր դրսի պատին վրայ կայ՝ «Կամաւն Աստուծոյ այս դիր է Նորաղինիա որ տվի գփաթլանանց ի կողթապան իմ հողոյս, առաջնորդ սուրբ ուխտիս Յոհանէս եւ իլ միաբանքս տվին ինձ Բ. աւր ժամ սուրբ Սարգսի, ա. ինձ ու ա. աւրն Սորիչահի. ՅԺԷ հայրապետաց նորոված որ գհողն իլէ կամ հակառակ Աստուածով: Ես Արարխաթուն միաբանեցա սուրբ ուխտիս առաջնորդ Յոհանէս եւ եղբարքս տվին ինձ Բ. ժամ Հոռոսիմե տաւնին»:

«Ես Մամա խաթուն միաբանեցայ սուրբ ուխտիս առաջնորդ Յովհաննէս եւ եղբարքս տուին Բ. ժամ»:

«Ես տէր Յովանէս եւ այլ եղբարքս գեկեղեցիքս ուրբաթ աւր հասարակաց հաստատեցաք ՅԺԷից նորոված ով խափանէ»:

«Կամաւն Աստուծոյ եւ Սորիչահ ամուսին Չարարտ տուի զիմ աւետարան Աստուածածինս տր եւ այլ միաբանքս Բ. աւր պատարաղ տուին ինձ Աւետե(այ)ց Աստուածածնի»:

«Աստուծով եւ Մրեհ տուի զիմ գնած հողն եւ մի Չափարին ի սուրբ ուխտս, միաբանքն տուին սուրբ Յակովբի երկու ժամն, մէկն ինձ, մէկ Փուփին, ով խափանէ կամ գհող իլէ, նորոված է յԱստուծոյ»:

Թ. ՈՍ. Ես ձորձ կանգնեցի գիաչս եղբար իմ Չարբաղայի բարեխաւս» (Չարախան, ձան., Բ., էջ 228—229. Արցախ, էջ 211. Ազգ. Հանդ. 1913, Իե., էջ 76—78. Տահադ, էջ 98):

Տէր Մովսէսեան կը հարցնէ թէ ուսկէ Չարախան եւ Բարխուդարեան Չարեքայի անունը Մշահանայ վանք կնքած են (Տահադ, էջ 98): Արձանագրութիւնները պարզապէս Ս. Աստուածածնի վանք կը կոչեն:

Չարեքայի վանքը ԺԲ.—ԺԳ. դարու հաստատութիւն մը կը թուի ըլլալ: Վանահայր առաջնորդներէն արձանագրութիւնները տէր Յովհաննէս կը յիշեն:

Ունեցած է առատ հող (Արարատ, 1896, էջ 42—43. հմմտ. եւ Ազգ. Հանդ., Իե., էջ 759):

4. ՇՈՒԲԱՅ ՎԱՆՔ

Աստղարլուրի եւ Թարթուս գետի մօտերն է այս վանքը, որ թանձր անտառի մը մէջ շինուած է եւ արդէն աւերակի վերածուած (Արցախ, էջ 201):

Ե.

ԶՐԱԲԵՐԳԻ ԵՒ ԿԻԼԻՍԱՍՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Ջրաբերգի գաւառը — միացած՝ կոչուած եւ Գիւլիստան (Կիւլիստան) Մեծկողմանք, Մեծկուանք, Չարաբերգ, Թալիշ ու արդ՝ Չուանշիր — կ'իյնայ Մուս բարձր լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թղլի եւ Թարթուս գետերու ձախ եւ Կուրակ գետակի աջ ափերուն մէջ:

1. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ ԿԱՐ ԱՆԱՊԱՏԸ

Կիւլիստանի վանքն է այս: Առնւոյց վտակի ձախ ափին մօտ: Կառուցուած՝ անտաշ քարով: Ունի մէկ մեծ եւ երկու փոքր խորան, երկու խորհրդարան, երկու լուսամուտ եւ զուռ մը: Երկար է 23.50 մետր եւ 10 մետր լայն: Ունեցած է միաբաններու յատուկ սենեակներ, որոնք արդէն գրեթէ աւերակ են: Թաղակապ սենեակի մը մուտքին սեմին վրայ գրուած է՝ «Թիւ ՌՃԿԳ յիշատակ է այս օթադս եղիա վարդապետին»: Անապատին դաւիթին մէջ թաղուած է նաեւ Պետրոս Մեծին ներկայացած Պետրոս Իւզրաշին» (Արցախ, էջ 242. Ազգ. Հանդ., 1899, Ե., էջ 348. Լուսնայ, 1896, էջ 203. Նոր Դար, է. տարի, Թ. 132. Հ. Էփրեկեան Բնաշխ. Բառարան, Ա., էջ 137):

2. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ծանօթ հետեւեալ յիշատակագրութեան՝ «(Աւետարան գրեալ ի թվ. ՌՃԼԱ) ի հայրապետութեան Այրուանից Տեառն Սիմէօնի եւ Երեմիայ կաթողիկոսաց, ի թաղաւորութեան Կարմրազլխաց Շահ Սուլէյմանին, ի դատաւորութեան քաղաքիս Գանջու Ապագղուլոյ եւ յարքեպիսկոպոսութեան սրբոյ աթոռոյն Եղլիշի առաքելոյն Յովհաննու Մեծիկեղոյ եւ յանապատիս, որ եմք Ս. Աստուածածնի, որ է մերձ սրբոյ Երից Մանկանց եւ յերկիրս Չարաբերգու: Գրիչ՝ Յովսէփ քահանայ: Ստացող Մարիամ կին Սարգսի, որ նուիրէ ի սուրբ անապատն Աստուածածնի, որ մերձ սրբոյ Երից Մանկանց» (Ա.Կիւլեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պոտուրեանէն):

3. ԴԱՏԻ-ԲԷԿԱՆՅ ՎԱՆՔԸ

Կիսաւեր վանք մը ինջա գետի աջ ափին եւ Կիւլիստան գիւղի ներքեւ: Եղած է դամբարանարան (Արցախ, էջ 243 եւ Ազգ. Հանդ. 1899, Ե., էջ 348):

4. ԵՂԻՇԷ ԱՌԱՔԵԱԼԻ ԿԱՐ ԶՐՎՇՏԻԿԻ ԿԱՐ ՄԻՇԻ-ՆԵՐՍԷՆՆԱՅ ՎԱՆՔԸ

«Մուս սարի քղանցքերից մի լեռնաբազուկ յանկարձ խոնարհուած է բարձրից երկու ձորի մէջ, ուր եւ կազմած է իւր ծայրից մի բլրակ, որի վերայ հիմնարկուած է վանքս: Սրբախոյրս շրջապատուած է աղխաղխեալ եւ բարձրագոյն լեռներով եւ անդնդախոր ձորերով եւ սոսկալի կերճերով. վանս որոյ նեղ է եւ սեղմուած է իւր հորիզոնն» (Արցախ, էջ 234):

Անտաշ քարերով շինուած վանք է եւ ունի հասարակ ճարտարապետութիւն, չափազանց բարձրութիւն եւ անճաշակ ոճ: Ունի երկու զուռ, 10 մ. երկարութիւն, 5.80 մ. լայնութիւն, «ութ հատ փոքրիկ մատուռներ... մի շարքում, միմեանց շատ մօտիկ, ամէնքն ալ հասարակ աղքատ շինութիւններ են» (Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 296. Արցախ, էջ 234. հմմտ. Հ. Ս. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 677):

Վանքին ձեղունն եւ խորանին արեւելեան պատը խոնարհած են: Աննախանձելի վիճակի մէջ են նաեւ ապէս դաւիթն ու դամբարանարանը:

Եղիշէի վանքին մէջ կան հետեւեալ արձանագրութիւնները՝

«Թ. ՉԺԳ. Կամաւն Աստուծոյ եւ Սահաստուր շինեցի ժամատունս յառաջնորդութեան տէր Սիմէօնի, աղաչեմ զձեզ յիշեցէք ի Քրիստոս»:

«Այս է հանդիստ տէր Սիմէօնի ՉԽԷ»:

«Այս է հանդիստ տէր Ովանէսի ի թվ. ՊԶ»:

«Այս է հանդիստ տէր Վարդանի Շ. Բս. ՉԽ»:

«Այս է հանդիստ Մատնոս եպիսկոպոսին, որ է առաջնորդ սուրբ ուխտիս, որ անմեղ սպանեցին Օսմանցիք, ՌՃ»:

«Այս ի հանդիստ Վաչական Թաղաւորին, Աստուած ողորմի հայրապետաց եւ ոյր ծնողացն, որ շինեց գեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմէօնի, թվ. ՉԼԵ էր»:

«Այս է հանդիստ տէր Մեսրոպին որդի որ է առաջ եղբայր Մելքիսեթ եպիսկոպոսին թվ. ՌՃԿԲ»:

«Յանուն Աստուծոյ եւ Առաքել վարդապետ, տէր Մատթէոս շինեցինք գեկեղեցիս հաճ բերինք»:

«Յիշատակ է գանգակս Ղազարին, որ է որդի Քիրիգորին, է թոռն Եաւրին, Յուսեփի

ՌձՆին, ի ժամանակս Շահ Սուլեյմանին մեծի արքային Պարսից եւ Սիմէօն շորհին Աստուծոյ կաթողիկոս Աղուանից շինեցի գեկեղեցիս ընդ հարազատ եղբարն իմոյ Իգնատիոս վարդապետին, որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ շինացոյ, յաղաւթս յիշեցէք որդիք Նոր Սիոնի»:

Իսկ խորանին ճակատին վրայ կարելի է կարգալ՝ «Կերտեցաւ այս յարկ նուիրանաց տանն Աստուծոյ... շինեցաւ յերկուց հարազատաց Սիմէօնի կաթողիկոսի եւ Իգնատիոսի բարունուոյ եւ այլ յուզուց, աշխատողաց... ի թուականիս ՌձԺԳին աւարտեցաւ սոյն եկեղեցի» (Արցախ, էջ 232. Զարախանց, ճանապարհորդութիւն, Ա., էջ 178—179. Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 275):

Աջակողմեան որմին վրայ կայ՝ «Շինուղ եւ վարդապետ եկեղեցոյս ուստայ Սարգիսն յիշեցէք ի Բրիտոս» եւ ասոր մերձ՝ «Աստուածասիրաց եւ ողորմածաց ի վերայ պատուական նշխարաց սրբոյ Դանիէլի մարգարէին եւ Երեց մանկանց, որք աստ կան եւ ասնեն մեծամեծ հրաշարծութիւնս, աստանոր շինեցաւ սա ի փրկութիւն մեզ...» (Զարախան, ճանապարհորդութիւն, Ա., էջ 179):

Երեց Մանկանց վանքը ունի երկու քարուկեր եւ թաղակապ խուց, մին՝ փոքր եւ միւսը՝ մեծ: Դարձեալ միարաններու սենեակներ, բայց փայտաշէն (Արարատ, 1896, էջ 44):

Եղած է կաթողիկոսանիստ (համա. Գանձասարի վանքը եւ Արձագանք, 1886, էջ 96. Արարատ, 1896, էջ 44 եւ Բաֆֆի, Սամսայի մեկիբութիւնները, էջ 91):

Եսայի (1619ին գրուած) Լամբրոնացիին գրութիւնները «վախձ» կու տայ Երեց Մանկանց վանքին⁵ (Աճառեան, Յուց. հայ. Չեո. Թաւրիզի, էջ 81), ուր Իգնատիոս վարդա-

⁵ 1580ին գրուած Աւետարանի մը վերջը կայ՝ «Կաման Աստուծոյ Կոստանդ մահապառնայ սուրբ Աւետարանս ի հարալ ընչից մերոց իմ կամաւորութեամբ եւ ավի իմ հոգոյ որդոյն տէր Ռատակէսին... եւ Կոստանդ մահապառնայ, լուսարար Եղեշէի սուրբ աստուծոյն եւ ավեալ իմ աւետարանիս գինն աստ՛ջի Աստուծոյ տէր Մարկոսին Յի մատչել, ա Ֆեթակի Էսոյ տուց արաւ ավի Ե խոն բիրինձ ա չուխայ, էլ մին Ֆեթակի՝ սուրբ երեք Մանկանցը. վկայ է Իգնատիոս կաթողիկոսս վկայ է, տէր Ակոբն վկայ է, Ռսկան կաթողիկոսս վկայ: Կնիք. Աստուծոյ Ռսկան Է(այ)ս կուճասայ Յիսուսի Բրիտոսի (Ակինեան, Հատար. Յիշատ. էջ 2538, Աւետարան, գրուած 1658 տարւոյ տակ):

պետը 1661ին Խորենացիին Հայոց պատմութիւնը կը դրէր (Թօփճեան, Յուց. հայ. Չեո. Դատեան Վ. ի, էջ 100): Անոր 1725ին Ալլազավերտի Պանաղուրցիին աւետարան մը, շուրջաւ մը եւ թագ մը «վախձ» կ'ընէ (Արցախ, էջ 43):

Մուրթեանց եւ Առաքինութեանց գրքին յիշատակագրութեան մէջ կայ՝ «Պաշտօնադէցի Արրահամ վարդապետս Տեառն սրբազան Ներսէսին գրադիր էի ՌձԺ թուին ի յոյանութեան որ եպիսկոպոս ձեռնադրեցաւ ՌձԺԱ ի Հոգ ԺԱն էր Աթանաս ծայրագոյն կաթողիկոսն եւ Սարգիս կաթողիկոսսքն վկայք են ի դրան սուրբ Երեց մանկանց: Նոյնպէս եւ ես սրբազան կաթողիկոսին Իսրայելի աւետարտանոսն Ստեփաննոս վարդապետս թվին ՌՄԾԹ. յուլ. ԺԸ. ի վանս Երեց սուրբ Մանկանցն ձեռամբ սրբազան վեհին իմոյ կաթողիկոսս օձայ» (Թօփճեան, անդ, էջ 70):

Երեց Մանկանց վանքը, որ նաեւ Դալի վանք կոչուած է, շատ սիրուած ուխտատեղի էր եւ ընդարձակ կալուածներու տիրացած (Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 274—275, Արձագանք, 1888, էջ 578. Արարատ, 1896, էջ 44):

6. ԻՆՆ-ՄԱՍԻ ԱՆԱՊԱՏԸ

Հիմնուած է Կոստապատի հիւսիսային կողմը: «Կառուցեալ է սրբատաշ քարով մի կամարի վերայ, որ ունի եկեղեցու եւ ոչ վանքի ձեւ» (Արցախ, էջ 217): Թէպէտ հիւսիսային պատին արձանագրութեանը համաձայն «Ի 1881 ամի շինեցաւ սուրբ ուխտս Իննմասանց արօք ժողովրդոց ի ժամանակս Յովսէփ վարդապետի Փինաշեանց», բայց չէնքէն դատելով աւելի հին ըլլալու է եւ այդ շրջանին վերանորոգուած:

«Անապատս ունի երեք սենեակ եւ մի աշխարհական վանահայր» (Արցախ, էջ 217): Մէլիք-Իսրայէլեաններէն ոճանք հոն թաղուած են: Սիրուած ուխտավայր էր եւ ունէր անտառ ու հող (Բաֆֆ, Սամսայի մեկիբութիւնները, Գ. տպ., էջ 15, 289. Լուծայ, 1896, էջ 225. Արձագանք, 1886, էջ 578):

7. ԻՐԵՐ ՄԱՆԿԱՆԵՐԻ ՎԱՆՔԸ

Աւերակ վանք մը Ներքին-Շէնի մերձ: Արեւմտեան եւ հիւսիսային պատերը միայն կանգուն (Արցախ, էջ 246):

8. ԿՈՂԵՐԻ ՎԱՆՔԸ

«Կողեր անուանեալ տեղում կայ մի աւերակ վանք, որից մնացած է միայն արեւմտեան պատն ու հիմքերը. այս տեղ կայ եւ հին հանդստարան» (Արցախ, էջ 244):

9. Ս. ՄԻՆԱՍ

Ջրաբերդի Բողլուի գիւղի մօտ կը գտնուի սուրբ Մինաս անուն ուխտավայր մը, որ ժամանակին կրնայ վանք եղած ըլլալ (Արցախ, էջ 251. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 427):

10. ՀԻՆ ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒԳԻ ԱՆԱՊԱՏՆ ՈՒ ԵՐԿՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Հին Ղարա-Բուլաղի մօտ կը ցուցուի մատուռ մը, զոր ժողովուրդը անապատ կ'անուանէ եւ Միջի ու Երի վանք կը կոչէ գիւղին մերձ գտնուած եկեղեցի մը եւ տաճար մը: Վերջինիս մէջ թաղուած է Գանձակի Դրեղոր կաթողիկոսը (Արցախ, էջ 254—255):

11. ՀՈՌԵԿԱՅ ԿԱՍ ՀԻՒՐԻԿԱՅ ՎԱՆՔԸ

Բարձրացած է Թալիշ գիւղի արեւմտեան կողմը, լեռներու մէջ: «Վանացս շինութիւնն ունի շատ հին ձեւ, քանզի խորանն ըստ սովորութեան կլոր չէ, այլ քառակուսի եւ շինուած է անտաշ քարերով» (Արցախ, էջ 228—229): Մուրթ եւ փոքր է: Գաւիթն եւս անտաշ քարով շինուած է:

Չի՛լ թուականին կառուցուած է՝ «ի Բահանյապետութեան Ստեփաննոսի, զինոյ եկեղեցոյս զտէր Յովհաննէս յիշեցէք ի Բրիտոս, նաեւ զճնոցսն եւ զեղբարսն իւր, Թիւ Չի՛լ»: Գաւիթին վրայ արձանագրուած է՝ «Յաշխարհակալ տէրութեան Ապաղա խանին եւ ի հոյրապետութեան տէր Ստեփաննոսին եւ ի պարոնութեան Նորաղինին եւ Սրապինին եւ Գուրգուղինին, եւ տէր Յովհաննէս շինեցի զգաւիթս յիշատակ ինձ եւ ճնոցաց իմոց Չի՛լ» (Արցախ, էջ 229. Զարախան, ճամբ., Ա., էջ 174):

Սոյն գաւիթին մէջ ամփոփուած են շատ մը կաթողիկոսներու եւ վարդապետներու մարմինները, իսկ անոր շրջապատին մէջ գեղատեղուած են անձինները Մէլիք-Բէկլարեաններու, միարաններու եւ Թալիշ գիւղի բնակիչներու:

Միարաններու սենեակներէն քանի մը հատը դեռ կանգուն են (Արցախ, էջ 229):

Ծանօթ է հետեւեալ յիշատակագրութիւնը՝ «Յիշատակ է այս Բարդուղիբոս Մեծ շինացի տէր Մեղքեթի որդի Սողոմոն վարդապետին. գրեցաւ առ դրան Յուրեկայ⁶, աշակերտ նորին տիրացու Յովհաննէս... թվ. ՌՄԼԶ Մայիս Դ. եր» (Բարխուդարեան, Աղուանից երկիր եւ զրացիք, էջ 192):

12. ՄԱՅՐԱՒԱՂԱՎԻ ՀԱՆԳՍԱՐԱՆԻ ՎԱՆՔԸ

Մաղավուղի արեւմտեան կողմը. Թարթառ գետի աջ լանջի բարձրութեան վրայ կայ հանդստարան մը, որ Մայրաքաղաքի հանդստարան կոչուած է: Այժմ ուխտատեղի, բայց անհաւանական չէ որ երբեմն վանք եղած ըլլայ: Առաջնորդներէն կը յիշուի տէր Սուքիաս (Արցախ, էջ 222):

Զ.

ԳԱՐԳՄԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Գարգմանի գաւառը — կոչուած նմանապէս Գարգմանաց ձոր, Գարթմանիկ եւ այժմ՝ Գանձակ — է իր նայ Կուրակ եւ Շամբոր գեղատեղիներու, Դաշտաբերանի եւ Մուս լեռնաշղթայի գաղաթնագծի շարունակութեանը մէջ:

1. Ս. ԱՍՈՒԱՍՄԱՆԻ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ գիւղի վերի ծայրը, Գանձակ գետի ձախ ափին: Կամարաշէն: Աւելի եկեղեցոյ ձեւ ունի քան թէ վանքի: Միարաններու բնակարաններն՝ աւերակ (Արցախ, էջ 275, տե՛ս Ոսկանապատ): (Դասելու է Ուտի վանքերու շարքին տակ):

2. ԿԱՍՆՈՅ ՎԱՆՔ

Ծանօթ Միթիթ. Գօշի Դատաստանագրքէն՝

«... Բայց ձեռնարկութիւն մեզ յայտ իրողութիւն եղև ի թուականութեան Հայոց ՈՂԳ (1184) ... ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս եւ յերայրանոցս անուանեալ Դանոյ, սկզբնաւորեալ

⁶ Զարախան արժանաչաւ անձեր կը տեղեկանայ թէ «անուն եկեղեցոյ չէ Հոռիկ այլ Հիւրեկ» (ճամբ., Ա., էջ 174):

ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանանցն յիշեցելոց, ձեռնառութեամբ հօր Յովսէփայ եւ եղբոր Պաղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս» (Մխիթ. Գօշի Դատաստանագիրք Հայոց, էջ 69—74. Այիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ 1855, էջ 85, § 164. հմմտ. Հոռոմաշէնի վանքը. հրատ. Բաստամեան, Վաղարշապատ 1880):

3. ԵՂՆԱՍԱՐԻ ԿԱՄ ԵՂԻՇԵՒ ՎԱՆՔԸ

Գեառաշէն աւանի մօտ: Ծինուած է «Երկու սիւների վերայ համակ սրբատաշ քարով... Դրան հարաւային սեմին վերայ (գրուած է)՝ «Թ. ՌՃԼԵ (1690) Եւ Նա... ս. ս. Մովսէս Երեց»: Հիւսիսային սեմի վերայ՝ «Ի յոպերանէ Ազատարարէ գ. թուահամարէ մեռատան տարեհ վեր տար (1311) Եւ անարժան Ղազարս գրեցի»: Երեւում է որ վանքս նորոգուած է երբեմն երբեմն: Վանքս ունեցած է շրջապարիսպ եւ թաղակապ զեղեցիկ սենեակներ, յորոց այժմ եօթն կանգուն եւ եօթն կիսակործան են» (Արցախ, էջ 266. Ազգր. Հանդ. 1899, Ե., էջ 345):

Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Փառք... Արդ եւ մեղանամեղ եւ անարժան Բումեցի մահտեսի Ոսկանս եւ եղբորս որդի Մանուչարս տեսեալ էր զայս... Աւետարանս... խախտեալ ի կազմից... Կտուք զսա կազմել... նորոգեցաւ ձեռամբ... Պետրոս սարկաւազի ի զուռն սուրբ անապատին Եղնասարս, նեղ եւ դառն ժամանակիս, որ եւ թաղաւորն Պարսից Նատիր կոչեցելոյ պարարեալ եւ պատեալ էր լեռան Կովկասու ընդ ազգին Լեզաց եւ էր աշխարհս ի մէջ տագնապի յոյժ: ՌՃԼԳ ամսեանն ի Ի.ին» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. Լալայեանցէն. հմմտ. Արցախ, էջ 334):

4. ԵՂՆԱՍԱՐԻ ԿԱՄ ԳԵՏԱՇԵՒՆ ԱՆԱՊԱՏԸ

Համանուն վանքի մերձ — Արցունիսի կողմերը — կը գտնուի անապատ մը, «որուն արեւելեան եւ արեւմտեան կողմերում եղած են խուցեր, զեռ մի քանիսն կանգուն են այժմ: Հաստատում են թէ կուսանոց եղած է այս, որոնց մէջ եղած է մի կոյս Մէլիք-Բէկլարեանի տոհմից, որի պատճառաւ Մէլիք-Թամրազին որդին նորոգել տուած է անապատս» (Արցախ, էջ 265. հմմտ. Հ. Ս. Էփրէ-

կեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 685 եւ Ազգր. Հանդ., 1899, է., էջ 318—319):

5. ԵՐՄՈՂԱՅ ԲԱՆԱՆՅԻ ԿԱՄ ՍՈՒԼՈՒԿԻ ՎԱՆՔԸ

Սուլուկ զիւղի մօտ բլրակի մը վրայ՝ հայկական ՉԻԸ. թուականին անտաշ քարերով շինուած մատուռ մը կայ: Թէեւ վանք կոչուած է, սակայն չէ կարելի ընդունիլ՝ թէ յատուկ իմաստով վանք եղած ըլլայ: Հոն կան բաւական թուով արձանագրութիւններ (Արցախ, էջ 270. Սրձագանք, 1886, էջ 294):

6. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԿԱՄ ԲԱՆԱՆՅ(ԱՅ) ԱՆԱՊԱՏԸ

Ծինուած է Բանանց զիւղի հարաւային կողմը, Արուսիւն վտակի աջ եզերքը, Խաշլարակ կամ Խաշակապ զիւղի մերձ: Ունի աւագ խորան մը եւ ուրիշ փոքրիկ խորան մը, չորս նեղկուկ պատուհան, երկու դուռ, 15-50 մ. երկարութիւն եւ 9 մետրէն քիչ մը աւելի լայնութիւն: Դռներէն մէկուն վրայ կը կարդանք՝ «Ծինե(ա)ց սուրբ եկեղեցիս Միլիսաճայ Աղիզն թվ. ՌՃԹ». եւ «Սուրբ խաչս Ովանէսին», իսկ միւսին վրայ կայ՝ «Սուրբ խաչս Փարին, Ծահումին» եւ «Սուրբ խաչս բարեխաւս Հոռոմսին ՌՃԸ» (Արցախ, էջ 285. Ազգր. Հանդ., 1913, ԻԵ., 74):

Թարգմանչայ անապատը օժտուած է դաւթով մը, ուր կան նուիրատուներէ արձանագրութիւններ (ՌՃԹԶ, ՌՃԽԴ, ՌՄԶ տարիներէն): Միարաններու համար կառուցուած են քանի մը սենեակներ (Արցախ, էջ 285—286. Ազգր. Հանդ., 1899, Ե., 342. Գանձակ զու., Ա., էջ 134—135. Զալալեան, ձամբ., Ա., էջ 167):

Անապատն քիչ մը հեռու է դմբէթաւոր գանդակատունը, որուն վրայ կայ՝ «Ես Պաղղասարի որդի մահտեսի Ներսէսս եւ Օսէփս սփինք սուրբ անապատիս ա. թուամն վախմ, սոքա տուին մեզ Դ. ժամ ՌՃԽԴ»: Հոս է տապանը Տէրունց Յարութիւնի որդի Գարրէլի եպիսկոպոսին, որ 60 տարի վանահայրութիւն կ'ընէ (Ազգր. Հանդ., 1899, Ե., 342):

Այս անապատին վանահայրերէն եղած է նաեւ Սարգիս Վ. Տփիսիսցի, կոչուած Քեանդա-գիրմազ (Արձագանք, 1886, էջ 295. հմմտ. Լուսնայ, 1897, Բ., էջ 187. Յովհաննէս Քեանդազրմազ):

7. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԿԱՄ ԽԱՇԼԱՐԱԿԱՅ ՎԱՆՔԸ

Խաշակապ զիւղի հիւսիսային կողմը, անկէ քիչ մը հեռու, սարահարթի վրայ բարձրացած է Թարգմանչայ կամ Խաշլարակայ վանքը: «Հետաքրքիր է եկեղեցին, բաւական փոքր, հասարակ անտաշ քարերից շինուած, քառակուսի յատակազմով, ցածրիկ եւ փոքր մի դռնով» (Տահազ, էջ 91. Ազգր. Հանդ., 1913, ԻԵ., էջ 74): Տաճարը ունի երկու փոքր եւ մէկ աւագ խորան, կաթուղիկ մը, տասը լուսամուտ, երկու խորհրդարան եւ դուռ մը (Արցախ, էջ 289): Մամուէլ եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ՝ 1800ին շինուած է — խաչաձեւ կամարներով վրայ բարձրացած — դաւիթը: Վանքը տնուած է ամուր շրջապարիսպի մէջ եւ օժտուած է ութը սենեակով, պարտէզով եւ մեղուանոցով (Արցախ, էջ 291. Ազգր. Հանդ. 1899, Ե., էջ 340—341):

Նորոգուած է քանի մը անգամ, մանաւանդ Ներսէս Բէկ Արրահամեան Տէր Ներսէսեանցի ձեռնարկեցութեամբ ու առատաձեռնութեամբ եւ հարուստ է զանազան արձանատուութիւններով (Արձագանք, 1885, էջ 54, 135, 1886, էջ 308—309. Ծաղիկ, 1892, էջ 299 եւ 319—322. Մշակ, 1875, Թ. 13):

Աւանդութեան համեմատ Թարգմանչայ վանքին հիմնադիրն է Ս. Մեսրոպ, բայց ետքէն սակայ կը քանդուի եւ յաճախ կը վերանորոգուի (Արձագանք, 1886, էջ 308): Բարխուդարեան անոր հիմնարկութիւնը կը նշանակէ 989ին մինչ Տէր-Մովսէսեան անոր եկեղեցին աւելի հին ժամանակի շինութիւն կը համարի (Տահազ, էջ 91): Վանահայրերէն է Սամուէլ եպիսկոպոսը (հմմտ. վերը):

Ունեցած է կարեւոր ձեռագիրներ (Զալալեան, ձամբ., Ա., էջ 167—169. Անահիտ, 1911, Թ. 5—6. 1907, էջ 97. Ծաղիկ, 1892, էջ 298. Հասկ, Հայագիտ. Տարեգիրք, 1948, Ա. տարի, էջ 8):

Թէոդորոս քահանան հոս վարժարան մը կը բանայ, անկէ յառաջ «ի վանս Խաշլարակայ» Յովհաննէս եպիսկոպոսը Գանձատետր մը կը կազմէ (Մշակ, 1875, Թ. 13. Ազգր. Հանդ., 1904, ԹԲ., էջ 168):

«ՌԼԲ Թուին կազմել է (Գանձատետր մը) Յովհաննէս եպիսկոպոսը յերկիրս Գանձայ ի վանս Խաշլարակայ» (Ազգր. Հանդ., էջ 168):

Թարգմանչայ վանքը 183 զեախաղին հող ունէր (Ազգր. Հանդ., 1899, Ե., էջ 341, Գանձակ զու., էջ 132—133 եւ Բաղմալէպ, 1900, էջ 136. Էփրէիկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 19):

8. ԿԵՌՍՏԱՎԱՆԻ ԲԵՐԳԻ ՎԱՆՔԸ

Շամքորի աջ ափին, բարձրութեան մը վրայ:

«Ոմանք կարծում են թէ վանք եղած է այս, իսկ այլ ոմանք՝ թէ բերդ է: Մենք հասանական ենք համարում վերջին կարծիքս, քանզի ժամանակաւ մեծ ճանապարհ եղած է զեախաղիս ձորով Գեղամայ լճի արեւելեան ափի վերայ» (Արցախ, էջ 304—305):

9. ԿԻՐԱՆՅ ՎԱՆՔԸ

Խաշակապի Թարգմանչայ վանքին բաւական հեռու է Կիրանց զիւղը, որուն մօտերը կայ մատուռ մը, որ «բնակիչներն առանում են վանք. այդ եղել է ժամանակին մի մենաստան, ուր նստել են կրօնաւորներ մինչեւ 1838 թուականը» (Արձագանք, 1886, էջ 310. հմմտ. Եւ Արցախ, էջ 288):

10. ՀՈՐՈՍՏԱՇԵՒՆ ԿԱՄ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Շամքոր զեախաղի աջ ափին:

Տաճարն ունի զեղեցիկ եւ սրածայր կաթուղիկ, աւագ խորան մը եւ ուրիշ խորանիկ մը: Ծինուած է կարմիր քարով եւ այս պատճառով կոչուած՝ կարմիր եկեղեցի (Արցախ, էջ 295—296): Արդէն «ունի եւ բաւական խուցեր միարանից համար եւ հանգստարան եւ քարուկիր շրջապարիսպ» (Արցախ, էջ 295):

Այս այն վանքն է, ուր Մխիթար Գօշ 1184ին իր Դատաստանագիրքը գրելու կը սկսէր (հմմտ. Դատաստանագիրք Մխիթար Գօշի, [հրատ. Բաստամեան], էջ 47. Բարխուդարեան, Արցախ, էջ 295, 428—429. Ազգր. Հանդ. 1899, Ե., էջ 345, նաեւ Տաշեան, Յուց. Մխիթ. Մատ., էջ 528. հմմտ. Դատաստանագիրքը): Սարգիս 1635ին հոս Գործք Առաքելոցի արտագրութիւնը կ'ընէ (Թօփ-ձեան, Յուց. հայ. Չեռ. Դաղեան Վ. ի, Ա., էջ 11):

Հոռոմաշէնի այս վանքը իբրեւ թէ յուրանական հողերէն հալածական եւ փախստական

կրօնաւորներու հիմնարկութիւն ըլլայ (Ձալախան, Ճամբորդութիւն, Ա., էջ 162): Յայտնի է թէ Շիրակի Հոռոմոսի վանքի պատմութիւնը մերձեցուած է այս վանքին:

11. ՄԱԼԱՉԱՐԵՐԳԻ ԿԱՄ ՄԱՐՄԱՐԵՐԳԻ ՎԱՆՔԸ

Հարցահանգիստ գիւղին «Հարա-արեւելեան հանդէպ, ոչ այնքան հեռի արձանացած է մի սար, որ բոլորովին առանձնացած է իւր շորս կողմերից եւ բարձրացած ձուածեւ» (Արցախ, էջ 293): Ահա այդ սարին կատարը գտնուած է վանք մը, որուն տեղն ապա եկեղեցի մը շինուած է: «Վանքի շուրջը պարիսպ է եղել, ինչպէս եւ խցեր, որոնցից միայն երկուսն են այժմ կանգուն» (Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 344): Վանքին խկահան անունն՝ անծանօթ: Մերձաւոր վայրերու անունով կոչուած է Մարգարեղի կամ Մածնարեղի¹, նաև Հարցանկիսի (Հարցահանգիստի) վանք (հմմտ. Արցախ, էջ 43 կամ Ամենափրկչի վանքը եւ Արձագանք, 1886, էջ 286):

12. ՄԱԼԱՉԱՐԵՐԳԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Նոյն պիտի ըլլայ նախորդին հետ: 1666ին «Եկեղեցւորութեան սուրբ Ամենափրկչին քաջ եւ արի բարունակաւոր Խաչատուր վարդապետի, ի գեղն Հարց հանգիստ» Աւետարան մը կը գրուի (Արցախ, էջ 43 եւ Արձագանք, 1886, էջ 296):

Միւսնոյն տեղը երկու տարի յետոյ Յովհաննէս ուրիշ Աւետարան մը կը գրէ «առաջնորդութեան ամբողջ Ամենափրկչին պարունակէր Յովհաննիսի» (Արց., էջ 45):

Հմմտ. քիչ ետքը՝ թիւ 14:

13. ՄՈՌԻՏԻ ԱՆԱՊԱՏԸ

Մոռուտ գիւղի մէջ եղած է անապատ մը. որուն անունն անծանօթ կը մնայ: Գանձակ փոխադրուած շիրիմաբարի մը վրայ գրուած է՝ «Այս է տապան Մոռուտ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետի. ՌՄԽԹ. Յունիս ԻԶ.ի (Արցախ, էջ 38 եւ 272. հմմտ. եւ Արձագանք, 1886, էջ 294):

¹ Անուն 1464ին Մաշտոց մը կը գրէ՝ «ի վանքս Մալեղկերայ ընդ հովանաւ սուրբ Աստուածածնիս» (Հ. Ե. Ակիւնեան, Հաւար. Յիշ. Երեւան, 453):

14. ՆԻԿԳՈՐԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Նիւկղար գիւղի հարաւ-արեւմտեան կողմը շինուած է այս վանքը. որ այժմ աւերակ է: Գաւիթին ծեփին վրայ կարելի է կարդալ՝ «Ես Դաւիթ Եպիսկոպոս նորոգեցի գեկեղեցիս այս թվ. ՌՃԻԸ» (Արցախ, էջ 294. հմմտ. Արձագանք, 1886, էջ 307): Նորոգող հայրապետին մարմինը խորանին տակ ամփոփուած է:

Խաչքարի մը վրայ կայ՝ «ի հայրապետութեան Աղուանից Տեառն տէր Մինաս կաթողիկոսի, ի թագաւորութեան Պարսից Շահ-բասին, ես մեղապարտ Աբրահամ Եպիսկոպոս եւ եղբարքս իմ Ներսէս կրօնաւոր եղաք» (Արձագանք, 1886, էջ 307):

Իսկ 1666ին՝ «Յեղեկոպոսութեան սուրբ Ամենափրկչին քաջ եւ արի բարունակաւոր Խաչատուր վարդապետի... ի գեղն Հարցահանգիստ» կը գրուի Աւետարան մը, որմէ երկու տարի վերջ ուրիշ մը կը գրէ Յովհաննէս «առաջնորդութեան սուրբ ամբողջ Ամենափրկչին պարունակէր Յովհաննիսի» (Արցախ, էջ 43, 45 եւ Արձագանք, 1886, էջ 296):

Ամենափրկչի վանքը, ինչպէս կը տեսնուի եղած է Եպիսկոպոսանիստ: Ունեցած է շրջապարիսպ եւ կալուած (Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 346):

15. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ գիւղի վանքն է այս: «Այդ եկեղեցեաց նոյնպէս դէպի հարաւ ձորի մէջ է Ս. Աստուածածնի քարաշէն անապատը, թաղակապ»: Արտաքին հարաւ-արեւելեան պատին ներքեւ թաղուած է եկեղեցւոյն վերանորոգողը՝ Յարութիւն Պապի, որ ՌՄՀ թուականին մեռած է: «Այս անապատը շինել է, ինչպէս պատմում են, Մելիք Ոսկանն, ուստի եւ Ոսկանա(յ) անապատ անունն է ստացել, որից եւ գիւղն Ոսկանապատ» (Արձագանք, 1886, էջ 294. Արցախ, էջ 275. տես եւ Ս. Աստուածածնի վանքը):

Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Եւ արդ ես Սարգսի որդի Խօջա Պատիս, առի զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց եւ ետու վախճ ի դուռն Ոսկանապատու կուսանաց անապատին Աստուածածնին սուրբ տաճարին... ՌՃԼԳ» (Արձագանք, 1886, էջ 294. հմմտ. անդ եւ 1888, էջ 133):

Ինչպէս յիշատակարանը կը վկայէ՝ այս անապատը կուսաններու համար է:

16. ՊԱՆԴԱԼԻՈՆԻ ՎԱՆՔԸ

Սուլուկ գիւղի մերձ: Սարի մը դադաթին վրայ շինուած էր երբեմն մեծ վանք մը Պանդալիոն վկայի անունովը: Այսօր հիմն ի վեր կործանած: ՌՃԻ թուին Ղազար քահանան հոս աւետարան մը կը գրէ (Արցախ, էջ 271. Աղուանից երկիր եւ զրացիք, էջ 251): Սիրուած ուխտատեղի է (Աղղբ. Հանդ., 1899, Ե., 347 եւ Արձագանք, 1886, էջ 293):

17. ՊՏԿԵՍՐԵՐԳ ԿԱՄ ՊՏԿԻ Ս. ԳԵՈՐԳԻ ԱՆԱՊԱՏԸ

Նիւկղար գիւղի մօտ: Ուխտատեղի, մատուռ-անապատ (Արցախ, էջ 294): Համանուն վանք մը՝ Խաչնքի մէջ (հմմտ. անդ, էջ 162):

18. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ գիւղի մերձ: Շինուած զՊԳ կամարի վրայ աւերակ (Արցախ, էջ 275):

19. ԳԵԱՐԵԱՆԱՅ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՄԻՐՁԻԿԻ ԱՆԱՊԱՏԸ ԿԱՄ ԱՍՏՈՒԱԾՄՈՐ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ եւ Մերդիկ գիւղերու քովերը: Շինուած է տորոնադոյն տաշուած քարերով: Ունի աւազ խորան մը եւ երկու փոքր խորան, վեց նեղ պատուհան եւ արեւմտեան կողմը դուռ մը: Երկարութիւնն է 12 մետր եւ լայնութիւնը գրեթէ 8 մետր: Ունի նաև դաւիթ մը, որ 7 մետր երկար եւ նոյնքան եւս լայն է: Շրջապատուած է պարիսպով, որ արդէն քանդուած է: Միարաններու սենեակներն ալ օրէ օր կը քայքայուին:

Գաւիթին մէջ կան թաղուածներ՝ «Հանգիստ հողապատեան Տեառն Եղիազարու, յաւէտ հանգիստ է անվշտակիր նշխար սորին, որ աստ կան, հողին գորով միջնորդ առ Տէր տանման փորձանաց զազանի, որ օծուել փութան զմիարանութիւն հողեւորական, փրկել ի փորձանաց այժմ եւ յազազայն, հանգաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնուց ՌՃԿԻ»:

«Այս է հանգիստ Չարեքու անապատի Մկրտիչ վարդապետին, թվ. ՌՂԷ»:

«Այս է տապան տանս սպասուոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ ազա անուանի, եղբայր Թամբազ Քայանթարու Չակամ մեծ Սահակի Ղարամուրատ գեղջէ, կոչի Արամի, մահն զիպէ վաթսուն Բ. ամի ՌՃԳ թուի եւ

չամբրիա (չատ ամեայ?) մարմին է ՂԳ. ամի» (Արցախ, էջ 277):

«Վանքիս արեւելեան կողմունն է Քեանգակերմազ մահանուանեալ Սարգիս վարդապետի գերեզմանն», որ օժտուած է ընդարձակ արձանագրութեամբ (Արցախ, էջ 277. Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 345): «Այս եկեղեցին կոչուած է Մերդիկի անապատ՝ գիւղին մօտ լինելուն պատճառով եւ Քեարխանի վանք՝ իւր մօտակայ Պղնձահանքի անունով» (Արձագանք, 1886, էջ 295): Ձալախան գայն կը կոչէ Աստուածամօր վանք (Ճամբ., Ա., էջ 169):

(Շարունակելի:)

Հ. Հ. ՈՍԿԱՆ

ԿՈՐՏԻՆՆԵՐԻ ԺՈՐՏԵՆԵԿԵԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն:)

Ճառ Գ. Գիտութիւն լիցի հարց եւ եղբարցք իմոց թէ նախաճառիս պատմեցաք ըստ տեսար մտաց իմոց թէ ըստ ժամանակին բերման եւ թագաւորաց որպիսութեան թէ յոյք է ինն ուղորմածք եւ ինամածուք ի վերայ ըրակին իւրոյ մանաւանդ ի վրայ քրիստոնէից: քանզի եմք ի միջի սոցա իրբեւ զճորտ եւ ճառայ. եւ այլ վատգարագոյն քան զճառայ քանզի տեսաք ճառայից ընչիւք ստանալով քաղցրութեամբ եւ ինամով պահեն զճառայն իւրեանց իսկ մեք առանց ստիկ ճառայեմք սոցա ըստ մարգարէին որ ասէ, յաճապեցին զժողովուրդս ըստ առանց քնոյ. եւ ոչ քոյ թիւ ազազակի մերոյ: Վասն այս պատճառաւ գրեցի նախաճառիս զթագաւորաց կարգն հանդերձ թվականօքն. թէ տէր կամեցի գրելոց եմ գետոյնս ի բերումն ժամանակին եւ ըստ թագաւորաց որպիսութիւնն մինչեւ եմք այժմ թվիս. ՌԿԵ. եւ գիտելի է զի ի հիմնարկութենէ եկեղեցոյս որ ի ժամանակս Մուրատ թագաւորին էր. եւ եղև մինչեւ ի սատ. Ը. թագաւոր որ է թվականս մեր. ՌԾԳ. եւ այս թվիս մեռաւ սուլթան Մուհամմատն քանզի ստաջի ճառիս յիշեցաք զսորա որպիսութիւնն եւ ոչ է պիտոյ միւսանգամ յիշել: Այսուհետեւ դարձուցուք զբանս մեր ըստ կարգի ժամանակիս եւ թագաւորաց: քանզի ՌԾԳ. նստաւ սուլթան Ահմէտ: